ԿԱՐԾԻՔ

Արա Անդրանիկի Ավետիսյանի

«Ֆինանսական հատվածի ազդեցությունը տնտեսական աճի վրա»

թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված

Ը.00.08 - «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ

տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի

հայցման համար

Ընդհանուր ներկայացում

Արա Ավետիսյանի աշխատանքը նվիրված է ֆինանսական և իրական հատվածների միջև փոխառնչությունների ուսումնասիրմանը: Փաստացի, աշխատանքում ուսումնասիրված են շուկայի իրական մասնակիցների (ֆիրմաների և այլ տնտեսական ագենտների) արտաքին ֆինանսավորման հնարավորությունների փոփոխություններով պայմանավորված իրական հատվածի վրա հնարավոր ազդեցությունները, որոնք իրենց հերթին բերում են մակրոցուցանիշների (օրինակ՝ ՀՆԱ մակադրակի) փոփոխությանը: Դրա համար աշխատանքում կատարված են երկու ուղղվածությամբ վերլուծություններ: Դրանցից առաջինը նվիրված է ինստիտուցիոնալ դիտանկյունից քաղաքական, տնետսական և ֆինանսական ինստիտուտների դերակատարման (նշանակալիության) գնահատմանը ընդհանուր տնտեսական աճում: Երկրորդը նվիրված է ֆինանսական աքսելերատորի մեխանիզմի ուսումնասիրմանը միկրո և մակրոմակարդակներում: Վերջինիս շրջանակներում ուսումնասիրվել է դրամավարկային քաղաքականության վարկային ալիքի տեսության որոշ կտորների, մասնավորապես՝ անշարժ գույքի շուկայում փուչիկների առկայության վերլուծությանը ՀՀ օրինակով:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Կատարված աշխատանքը ներառում է կարևորագույն վերլուծություններ ՀՀ տնտեսության և ֆինանսական հատվածի համար: Ընդհանուր առմամբ

արդիականության՝ ատենախոսության շրջանակներում ներկայացված հիմնավորումը բավարար է: Մասնավորապես, իրական հատվածի հիմնական տնտեսական ագենտների (ֆիրմաների) կողմից վարկը դիտարկվում է, որպես ֆինանսական ռեսուրսների ներգրավման հիմնական գործիք: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ էական է գնահատել վարկավորման ալիքի դերը իրական մակրոտնտեսական ցուցանիշների վրա տնտեսական շոկերի ունեցած ազդեցություններում:

Ատենախոսության ընդհանուր կառուցվածքը և նկարագրությունը

Ատենախոսությունը հիմնված է հեղինակի կողմից տարբեր հանդեսներում տպագրված 6 գիտական հոդվածների վրա: Այն կազմում է 143 ամբողջական էջ, բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից (յուրաքանչյուրը 3 ենթագլուխ), եզրակացությունից և գրականության ցանկից: Վերջինս ընդգրկում է 87 աղբյուր:
Այս առումով հավելեմ իմ կարծիքը, որ աշխատանքը ունի հստակ կառուցվածք և գլուխների և ենթագլուխների ճիշտ և հասկանալի բաժանում:

Աշխատանքը ներառում է 27 գծապատկեր և 21 աղյուսակ: Այստեղ կարող եմ նշել, որ բոլոր գծապատկերները և աղյուսակները անհրաժեշտ են և ունեն հստակ և հասկանալի վերնագրեր: Դրանք բոլորը հիշատակված են աշխատանքում և կարևոր են ընդհանուր բովանդակությունը և միտքը ճիշտ փոխանցելու տեսանկյունից:
Գրականության ցանկի բոլոր աղբյուրները ստացել են համապատասխան հղումները ատենախոսությունում:

«Ներածություն» բաժնում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական և տեղեկատվական հիմքերը, ստացված գիտական նորույթները, հետազոտության գործնական նշանակությունը և ատենախոսության կառուցվածքը:
Առաջին գլուխը նվիրված է գրականության ուսումնասիրությանը: Մանարամասն ներկայացված են այնպիսի հեղինակների կողմից ստացված ադրյունքներ, ովքեր հանդիսանում են ուսումնասիրվող երևույթների (ֆինանսական աքսելերատոր, վարկային ալիք) առաջնեկները: Հեղինակի կողմից ուսումնասիրվել է նաև հենց ֆինանսական աքսելերատորի և վարկային ալիքի տեսությունը, ինչպես նաև

ֆինանսական փուչիկները բացատրող և ուսումնասիրող բավականին ընդգրկուն գրականություն:

Երկորդ գլուխը նվիրված է մակրոցուցանիշների՝ մանսավորապես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և դրա աճի տեմպի վրա ֆինանսական (և ոչ միայն ֆինանսական) ինստիտուտների ազդեցությունը: Այստեղ կիրառված հիմնական գործիքակազմը տարածական և պանելային տվյալներով վերլուծությունն է: Կատարված են բոլոր անհրաժեշտ վիճակագրական թեստերը (հետերոսկեդաստիկություն, սխալների նորմալություն և այլն):

Երրորդ գլուխը նվիրված է ֆինանսական աքսելերատորի հետ կապված վերլուծություններին և անշարժ գույքի շուկայում ֆինանսական փուչիկի բացահայտմանը: Այս գլխում կատարվել է նաև ֆինանսական աքսելերատորը ընդգրկող DSGE մոդելի կալիբրացիա ՀՀ-ի համար:

Հարկ է նշել որ բոլոր մոդելային ենթադրությունները բերված են վերլուծություններից առաջ, ինչը էականորեն հեշտացնում է ընթերցումը:

Այս գլխում հիմնական գործիքակազմերը եղել են պանելային տվյալներով վերլուծությունը, չբալանսավորված (ոչ ամբողջական, կամ բացակայող տվյալներով) պանելային մոդելներով վերլուծությունը և պարամետրական մոդելների գնահատումը, լրացուցիչ՝ մոդելի թելադրանքով կատարված վիճակագրական թեստերի (հիպոթեզների) ստուգմամբ:

Եզրակացությունը հստակ ամփոփում է ստացված արդյունքները:

Ատենախոսության նպատակը, խնդիրները և գիտական արդյունքները

Աշխատանքի հիմնական արդյուքները և նպատակները շարադրված են աշխատանքում: Քանզի դրանք պարունակում են էական ցուցանիշային վերլուծություններ: Դրանցից ամենակարևորներն են՝

- ֆինանսական աքսելերատորի մեխանիզմի տեսական մոտեցումները հիմնավորվել են ՀՀ օրինակով, այսպիսով ցույց տալով աքսելերատորի առկայություն ՀՀ-ում:
- Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում փուչիկի առկայության թեստավորման համար մշակվել/կիառվել են փուչիկների թեստավորման մոդելներ:

- Կատարվել է ֆինանսական ինստիտուտների ազդեցության գնահատում տնտեսական աճի վրա: Կատարվել է DSGE մոդելի կալիբրացիա ՀՀ-ի համար: Ելնելով ստացված արդյուքներից՝ ներակայացվել են համապատասխան առաջարկություններ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքի վերաբերյալ առկա են մի քանի դիտարկումներ: Կցանկանամ նշել, որ այդ դիտարկումները առաջնահերթորեն պայմանավորված են անձնական հետաքրքրությամբ և չեն մատնանշում աշխատանքի թերություններ:

- Հեղինակի կողմից օգտագործված տվյալներից որոշները ենթակա են փոփոխության նույնիսկ նշված աղբյուրներում: Նույն վիճակագրական ծառայության հրապարակումները կարող են փոփոխվել: Որոշ դեպքերում ցանկալի կլիներ, որ հավելվածում տրվեին օգտագործված տվյալները (այն դեպքերում երբ դրանք մեծ ծավալ չեն զբաղեցնում): Սա կհեշտացներ աշխատանքի արդյունքների վերարտադրությունը:
- Հեղինակը գտել է, որ 2017թ. դրությամբ առաջարկվող մոդելը չի դիտարկում ֆինանսական փուչիկ Երևանի անշարժ գույքի շուկայում: Միևնույն ժամանակ մոդելը բացահայտել է փուչիկ ավելի վաղ ժամանակահատվածում բացասակա ուղղվածության փուչիկ, այն է՝ տան գները ավելի քիչ են եղել քան իրենց «արդար գինը»:

  Չնայած հեղինակի կողմից ստացված արդյունքների արժանահավատությանը՝ այնուամենայնիվ, ստացված արդյուքները հիմնվում են ոչ այդքան իրատեսական ենթադրությունների վրա: Վերջիններիս մասին խոսում է նաև հեղինակը: Մասնավորապես՝ Եթե տոկոսադրույքի (դիսկոնտավորման դրույքի) հաստատուն մնալը կարելի է համար ոչ շատ մեծ շեղում իրականությունից, ապա ռենտաների հաստատուն մնալը ունի կանխորոշիչ դեր մոդելի տեսանկյունից:

  Առաջարկում եմ հետագայում փորձել աշխատանքը շարունակել, այս ենթադրության ավելի մեղմ տարբերակները օգտագործելով:

Վերոնշյալ դիտարկումները կրում են խորհդի կարգավիճակ, իսկ բուն աշխատանքի վերաբերյալ լրացուցիչ էական դիտարկումներ առկա չեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը և սեղմագիրը բավարարում են ԲՈԿ-ի կողմից ներկայացված բոլոր պահանջներին:

Ատենախոսությունը էական պրակտիկ նշանակություն ունեցող, հստակ և բովանդակալից, համապարփակ և գիտականության չափանիշներին բավարարող աշխատանք է: Այն միանշանակ համապատասխանում է Ը.00.08-«Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող պահանջներին: Հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը Ը.00.08-«Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԻՄԱԽՈՍ
Ֆիզ.մաթ. գիտությունների թեկնածու՝
Վարդան Գևորգի Բարդախչյան

Պարոն Վ. Բարդախչյանի
ստորագրությունը հաստատում եմ
ԵՊՀ գիտական քարտուղար
Մ. Վ. Հովհաննիսյան

27. 08. 24թ.